ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2022 թվականի N: 339 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀՈՂՄԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՈԳՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 230-Ա ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N247-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 4-րդ կետի, 5-րդ կետի 2-րդ ենթակետի, 6-րդ կետի, 7-րդ կետի, 9-րդ կետի 2-րդ ենթակետի, 11-րդ կետի, 12-րդ կետի, 16-րդ կետի, 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 25-ի N 01/09.3/9195-2022 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Աշոցք համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 10-ի N 16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 2-ի N 0-25/050-2022 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N 3 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N 6 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2022 թվականի մարտի 28-ի N 6 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2022 թվականի մարտի 28-ի N 1 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Վիկտոր Հովհաննիսյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Գառնիկ Սիմոնյանի և Կարինե Սերոբյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Շուշան Վարդանյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Անահիտ Մինասյանի և Վալյա Կյուրեղյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Սաթենիկ Տեփոյանի և Թամարա Ուրուշանյանի լիազորությունները:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Լորիս Քալաշյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Սամվել Գրիգորյանի և Շուշաննա Հովհաննիսյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Արտուշ Մանուկյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Արմեն Հակոբյանի և Վարուժան Հարությունյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված՝ անդամներ Ասյա Թորոսյանի և Անուշ Մարտիրոսյանի լիազորությունները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի անվանական կազմը 3 տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N 51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 230-Ա որոշումը:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N 51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 247-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի հունիսի «26» N 339 - Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀՈՂՄԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՈԳՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ

1.	Նարեկ Բեգզադյան Արթուր Պապիկյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված,
2.	Ռազմիկ Մուրադյան Վասյա Արշակյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Արտավազդ Ղուկասյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Ամասիա համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Սասուն Մարդոյան Սիրան Աբգարյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Գոհարիկ Մարդոյան Լիանա Պողոսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1) Գևորգ Տիգրանյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Աշոցք համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
4) Նաիրա Մանուկյան Լուսինե Սուքիասյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
5) Ասյա Թորոսյան Անուշ Մարտիրոսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է